

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Երևանի պետական համալսարան»
հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝
2015 թ. դեկտեմբերի 23-ին տեղի ունեցած թիվ 4 նիստի

ք. Երևան

Նիստին ներկա էին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 32 անդամներից 29-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցման ստորագրացուցակը):

Նիստը նախագահում էր Խորհրդի նախագահ, ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանը, քարտուղարում՝ Խորհրդի քարտուղար, Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ Մ. Մալխասյանը:

Ս. Սարգսյանը, բացելով Խորհրդի երկրորդ նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. 2014-2015 ուստարում ԵՊՀ գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ ԵՊՀ ղեկավարի հաշվետվության ներկայացում և կատարողականի հաստատում:

Ձեկուցող՝ ԵՊՀ ղեկավար Ա. Սիմոնյան

2. 2016-2020 թթ. ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի հաստատում:

Ձեկուցող՝ ԵՊՀ ղեկավար Ա. Սիմոնյան

3. 2015 թ. (հունվար-նոյեմբեր ամիսներ) ԵՊՀ եկամուտների և ծախսերի կատարողականի մասին հաղորդում:

Ձեկուցող՝ ԵՊՀ ղեկավար Ա. Սիմոնյան

4. 2016 ֆինանսական տարվա ԵՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում:

Ձեկուցող՝ ԵՊՀ ղեկավար Ա. Սիմոնյան

5. 2016 թ. ԵՊՀ կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատում:

Ձեկուցող՝ ԵՊՀ ղեկավար Ա. Սիմոնյան

6. 2016 թ. ԵՊՀ ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձի ընտրություն:

Ձեկուցող՝ ԵՊՀ ղեկավար Ա. Սիմոնյան

7. Ընթացիկ հարցեր.

ա. «ԵՊՀ ուսանողական ծառայություններ» ՍՊԸ ստեղծում ԵՊՀ կազմում:

բ. Այլ հարցեր:

Խորհրդի անդամների կողմից օրակարգային այլ հարց չառաջարկվեց, և օրակարգը դրվեց քվեարկության. կողմ` 29, դեմ` 0, ձեռնպահ` 0:

1. 2014-2015 ուստարում ԵՊՀ գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ ԵՊՀ ռեկտորի հաշվետվության ներկայացում և կատարողականի հաստատում: Անցնելով օրակարգային առաջին հարցին` Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը 2014-2015 ուսումնական տարում ԵՊՀ գործունեության վերաբերյալ հաշվետվության ներկայացման համար խոսքը տրամադրեց ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանին: Առաջարկվեց հաշվետվությունը ներկայացնել 15 րոպեի սահմաններում:

Ա. Սիմոնյանն իր զեկույցում ներկայացրեց ԵՊՀ ձեռքբերումներն ու բացթողումներն ուսումնական գործընթացում և գիտահետազոտական աշխատանքներում, ինչպես նաև միջազգային համագործակցության, հրատարակչական գործունեության, հանրային կապերի և տեղեկատվական համակարգերի, սոցիալական քաղաքականության, ուսանողների և շրջանավարտների հետ տարվող աշխատանքների ոլորտներում:

Ռեկտորն ընդգծեց, որ 2014-2015 ուստարում ԵՊՀ գործունեությունը կազմակերպվել և իրականացվել է ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված խնդիրներին ու նպատակներին համապատասխան: Միաժամանակ ծավալուն աշխատանք է կատարվել ԵՊՀ զարգացման ռազմավարական նոր ծրագրի (2016-2020 թթ.) մշակման ուղղությամբ: Ա. Սիմոնյանի վստահեցմամբ` բոլոր բնագավառներում իրականացված միջոցառումներն ու ծրագրերը կոչված են եղել խթանելու համալսարանի առաջընթացը, ապահովելու նրա մրցունակությունը գիտակրթական ասպարեզում:

Ա. Սիմոնյանը շեշտեց, որ հաշվետու ուստարին համալսարանի համար հիշարժան ժամանակահատված էր իրավակազմակերպական առումով. ՀՀ Կառավարության որոշմամբ` «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը վերակազմակերպվեց «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի և ստեղծվեց ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը` որպես համալսարանի կառավարման բարձրագույն մարմին:

Ա. Սիմոնյանն անդրադարձավ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ ԵՊՀ-ում կազմակերպված բազմաթիվ ծրագրերին ու միջոցառումներին, ինչպես նաև ԵՊՀ հրատարակչական գործունեությանը:

Շարունակվել է համագործակցությունն արտերկրի գիտակրթական կենտրոնների հետ, կնքվել են նոր պայմանագրեր: Իրականացվել են կրթական, գիտական, մշակութային համատեղ ծրագրեր, դասախոսների և սովորողների փոխայցելություններ:

Անդրադառնալով ԵՊՀ սոցիալական քաղաքականությանը` ԵՊՀ ռեկտորը նշեց, որ ԵՊՀ վարչակազմի ու Արհեստակցական կազմակերպության ուշադրության կենտրոնում

են եղել համալսարանի աշխատողների հանգստի, առողջության պահպանման, սոցիալական այլևայլ խնդիրներ, ձեռնարկվել են դրանց լուծմանն ուղղված միջոցառումներ:

Աշխատանքներ են տարվել ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ, բարելավվել է բուհի նյութատեխնիկական բազան, ձեռք են բերվել ժամանակակից նոր սարքավորումներ: Շարունակվել են աշխատանքները տեղեկատվական համակարգերի, համակարգչային տեխնիկայի, ներհամալսարանական համակարգչային ցանցի սպասարկման, զարգացման և արդիականացման ուղղությամբ:

Ռեկտորն իր հաշվետվության մեջ առանձնակի շեշտադրում կատարեց ուսանողական կառույցների աշխատանքներին՝ նշելով, որ հաշվետու ուստարում Ուսանողական խորհուրդը կազմակերպել է շուրջ 300, իսկ Ուսանողական գիտական ընկերությունը՝ մոտ 560 միջոցառում: «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու»-ն գրանցվել է պարբերականների միջազգային ստանդարտ համարակալման համակարգում և ընդգրկվել ՀՀ ԲՈՀ-ի՝ ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում:

Ա. Սիմոնյանն անդրադարձավ նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գործունեությանը:

Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանն առաջարկեց հաստատել ռեկտորի հաշվետվությունը և ԵՊՀ գործունեությունը 2014-2015 ուստարում գնահատել բավարար: Առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 3-րդ ենթակետով և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 3-րդ ենթակետով, լսելով 2014-2015 ուսումնական տարում ԵՊՀ գործունեության վերաբերյալ ռեկտոր Ա. Սիմոնյանի հաշվետվությունը՝

- 1) Հավանություն տալ 2014-2015 ուսումնական տարվա ընթացքում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:
- 2) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2014-2015 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:

2. 2016-2020 թթ. ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի հաստատում: Նախագահ Ս. Սարգսյանը 2016-2020 թթ. ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի ներկայացման համար խոսքը տրամադրեց ԵՊՀ ռեկտորին: Վերջինս նշեց, որ նախևառաջ ուսումնասիրվել ու բացահայտվել են ԵՊՀ գործունեության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները, կազմվել է բուհի՝ միջազգային ստանդարտներին հա-

մապատասխան SWOT (Strengths, Weaknesses, Opportunities, Threats) վերլուծություն: Այնուհետև մշակվել է ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի նախագիծը, որը ներառում է բուհի առաքելությունը, տեսլականը, հիմնարար արժեքները, ռազմավարական նպատակները, դրանց իրականացման խնդիրները, համապատասխան գործողությունները և առաջընթացի գնահատման ցուցիչները: Կազմվել է ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանի նախագիծը, որտեղ մատնանշված են յուրաքանչյուր գործողության կամ միջոցառման իրականացման ժամանակացույցը, պատասխանատուները, պահանջվող ֆինանսական միջոցները և ակնկալվող արդյունքները: Առաջին անգամ կազմվել է ռազմավարական ծրագրի բյուջեի նախագիծը, ինչն իրատեսական հիմք է ստեղծում դրա հաջող իրականացման համար:

ԵՊՀ ռեկտորը ներկայացրեց ռազմավարական ծրագրի հիմնական դրույթներն ու նպատակները՝ ընդգծելով, որ ԵՊՀ գործունեությունը նպատակաուղղված է հայագիտության, բնական, սոցիալ-տնտեսական և հումանիտար գիտությունների ու տեխնիկայի, մշակույթի տարբեր ուղղություններով կրթական ծրագրերի և հիմնարար ու կիրառական գիտական հետազոտությունների իրականացմանը: Ա. Սիմոնյանը շեշտեց, որ Մայր բուհը ձգտում է տրամադրել որակյալ կրթական ծրագրեր, իրականացնել նորարարական ուսանողամետ ուսուցում, խրախուսում է կատարելության սկզբունքները սովորողների և աշխատողների շրջանում: Բուհի ղեկավարության ուշադրության կենտրոնում առաջին հերթին ուսանողի կրթական ձեռքբերումները, ուսումնառությունից նրա բավարարվածությունը և հաջողություններն են: Այդ նպատակով համալսարանն ուսանողի կարիքները դնում է իր ակադեմիական գործունեության և օժանդակ ծառայությունների կազմակերպման, կրթական քաղաքականության և կրթական ծրագրերի մշակման հիմքում:

Ա. Սիմոնյանն ընդգծեց, որ ծրագրի նախագիծը կազմելն ու քննարկելը ֆակուլտետներում, վարչական ստորաբաժանումներում և ուսանողական կառույցներում ավելի քան 8 ամիս է տևել: Նախագիծն արժանացել է ԵՊՀ գիտական խորհրդի հավանությանը և երաշխավորվել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի հաստատմանը ներկայացնելու:

ԵՊՀ գիտական խորհրդի միջնորդությունը լսելուց հետո խորհրդի անդամ, ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ա. Դավթյանը հարցրեց, թե ինչ է ի նկատի առնված SWOT վերլուծության մեջ կրթությանն առնչվող արտաքին վտանգների թվում օրենսդրական և ենթօրենսդրական դաշտի անկատարությունը նշելիս: Ա. Սիմոնյանը պատասխանեց, որ Մայր բուհի բնականոն գործունեությունը երբեմն սահմանափակվում է «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթներով, քանի որ այդ օրենքն ընդունվել է մինչև ՀՀ-ում մի քանի բուհերի՝ հիմնադրամի կարգավիճակ ստանալը, և այդ իսկ պատճառով օրենքում հաշվի չեն առնված հիմնադրամ-բուհերի գործունեության առանձ-

նահատկությունները: Հարցը քննարկվել է ՀՀ պետական բուհերի ռեկտորների խորհրդի նիստում, և դիտարկվում են երկու տարբերակներ՝ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի լրամշակում բուհերի մասին դրույթներով կամ «Հիմնադրամ բուհերի մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ԱԺ: Ռեկտորը շեշտեց, որ աշխատանքներ են ընթանում ևս երկու օրենքներում առկա բացթողումների լրամշակմամբ օրինագծերի ներկայացման ուղղությամբ, քանի որ խնդիրներ կան բոլոր բուհերի համար դիմորդների ընդունելության միասնական օրենսդրական դաշտի ապահովման և այլ հարցերում:

Խորհրդի անդամ, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ. Մարտիրոսյանը հետաքրքրվեց բնագիտական ֆակուլտետներում գործընկեր ավագ դպրոցների մասնագիտացված դասարաններից հարցազրույցով ընդունելության և մասնագիտական հատուկ խմբերի վերաստեղծման խնդրում առկա օրենսդրական խոչընդոտներով: Ա. Սիմոնյանը պատասխանեց, որ օրենսդրական փոփոխություններից հետո բնագիտական ֆակուլտետներում հնարավոր կլինի վերականգնել հարցազրույցով ընդունելությունը և վերաբացել մասնագիտական հատուկ խմբերը, այլապես բնագիտական ֆակուլտետները կշարունակեն բարձր առաջադիմությամբ դիմորդների պակաս ունենալ:

Այլ հարցեր չհնչեցին, և ԵՊՀ գիտական խորհրդի միջնորդությունը դրվեց քվեարկության. կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 4-րդ ենթակետով և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 4-րդ ենթակետով՝ հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

3. 2015 թ. (հունվար-նոյեմբեր ամիսներ) ԵՊՀ եկամուտների և ծախսերի կատարողականի մասին հաղորդում: Օրակարգի 3-րդ հարցը ներկայացնելիս Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանն անհրաժեշտ համարեց նշել, որ, համաձայն «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետի, ԵՊՀ կանոնադրության 22-րդ կետի 2-րդ, 42-րդ կետի 7-րդ ենթակետերի և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 16-րդ ենթակետի, Խորհուրդը պետք է հաստատի ոչ թե 11 ամսվա, այլ ֆինանսական ողջ տարվա հաշվետվությունը, ուստի այն Խորհրդի հաստատմանը կներկայացվի մի քանի ամիս անց:

Ռեկտորը ներկայացրեց ԵՊՀ եկամուտների և ծախսերի կատարողականը, ըստ որի՝ 2015 թ. տասնմեկ ամսվա ընթացքում ԵՊՀ մուտքերը կազմել են 9.901.259.000 (ինը

միլիարդ ինը հարյուր մեկ միլիոն երկու հարյուր հիսունինը հազար) դրամ, այսինքն՝ բուհի տարեկան նախահաշիվը գերակատարվել է 2.2%-ով, ինչը պայմանավորված է ԵՊՀ հյուրերի տան վաճառքից ստացված դրամական միջոցներով: Ավելացել է պետպատվերով սովորող ուսանողի ուսումնառության համար պետական նպաստը՝ 585.000 (հինգ հարյուր ութսունհինգ հազար) դրամի փոխարեն դառնալով 619.500 (վեց հարյուր տասնինը հազար հինգ հարյուր) դրամ: Ծախսերը կազմել են 9.023.742.000 (ինը միլիարդ քսաներեք միլիոն յոթ հարյուր քառասուներկու հազար) դրամ, ինչը կազմում է տարեկան նախահաշվի 93.1%-ը: Պետական բյուջե վճարվող հարկերի նախատեսված ծավալը գերազանցվել է 417.268.000 (չորս հարյուր տասնյոթ միլիոն երկու հարյուր վաթսուներեք հազար) դրամով, ինչը պայմանավորված է ԵՊՀ հյուրերի տան վաճառքի գործարքից ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարմամբ: Հիմնանորոգման ծախսերը գերակատարվել են 7.881.000 (յոթ միլիոն ութ հարյուր ութսունմեկ հազար) դրամով և ավելանալու են ևս մոտ 160.000.000 (մեկ հարյուր վաթսուն միլիոն) դրամի չափով դեկտեմբեր ամսին՝ պայմանավորված մարզահամալիրի նորոգմամբ:

Աշխատանքի վարձատրության ծախսերը տասնմեկ ամսվա դրությամբ կազմել են ընդհանուր ծախսերի 66.5%-ը: Աշխատակիցների թիվը կազմում է միջին ամսական 2.720 մարդ, միջին ամսական աշխատավարձը՝ 196.500 (մեկ հարյուր իննսունվեց հազար հինգ հարյուր) դրամ, իսկ նվազագույն աշխատավարձը՝ 80.000 (ութսուն հազար) դրամ:

Կատարողականի մասին հաղորդումը լսելուց հետո Խորհրդի անդամ, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ. Մարտիրոսյանն առաջարկեց հաղորդման մեջ հարկային վճարումներին անդրադառնալիս «գերակատարվել» բառը ներկայացվելիք հաշվետվության մեջ փոխարինել «ավելացել» բառով:

Այլ հարցեր չինչեցին, և Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանն առաջարկեց, ի գիտություն ընդունելով ռեկտորի հաղորդումը, օրակարգային 4-րդ հարցը ներկայացնելու համար ևս խոսքը տրամադրել Ա. Սիմոնյանին:

4. 2016 ֆինանսական տարվա ԵՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում: Ա. Սիմոնյանը, ներկայացնելով 2016 թ. ԵՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշիվը, շեշտեց, որ այն կազմում է 11.100.000.000 (տասնմեկ միլիարդ հարյուր միլիոն) դրամ՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 1.410.000.000 (մեկ միլիարդ չորս հարյուր տասը միլիոն) դրամով կամ 14.6%-ով: Ավելացումները հիմնականում կապված են ԵՊՀ հյուրերի տան վաճառքից 2016 թ. ևս ստացվելիք դրամական միջոցներով, դրամաշնորհային ծրագրերով նախատեսված եկամուտներով և պետպատվերով սովորող ուսանողի ուսումնառության համար պետական նպաստի ավելացմամբ:

Ուսման վարձերի գծով եկամուտները գրեթե նույն չափով են նախատեսված: Ուսանողների թվի ավելացում նախատեսված չէ, իսկ եկամուտների մի փոքր ավելացումը պայմանավորված է նրանով, որ շրջանավարտ ուսանողների ուսման տարեկան վարձավճարը ավելի ցածր է, քան մյուս կուրսերում սովորողներինը:

Ընթացիկ ծախսերի մակարդակը 2015 թ. համեմատ գրեթե նույն չափով է նախատեսված՝ կազմելով ընդհանուր ծախսերի շուրջ 80%-ը:

Նախահաշվում ավելացել են ծախսային նոր հոդվածները, մասնավորապես՝ 18.000.000 (տասնութ միլիոն) դրամ նախատեսված է հաշմանդամության կարգ ունեցող աշխատակիցներին հավելավճարներ տալու և 2.000.000 (երկու միլիոն) դրամ՝ ԵՊՀ հիմնական աշխատողների պարտադիր բուժզննման համար: Նախատեսվում է ԵՊՀ հյուրերի տան վաճառքից ստացվող միջոցների հաշվին մարզահամալիրի և Դիլիջանի մարզաառողջարանային ճամբարի հիմնանորոգումը: Ուսումնական մասնաշենքերում հիմնանորոգման աշխատանքները նախատեսված են համաձայն 2016-2020 թթ. ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի:

Նախահաշիվը դրվեց քվեարկության. կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Դեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 7-րդ ենթակետով և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 7-րդ ենթակետով, լսելով ռեկտոր Ա. Սիմոնյանի զեկուցումը Երևանի պետական համալսարանի 2016 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի վերաբերյալ՝

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ռեկտորին 2016 թվականի ծախսերը կատարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվին համապատասխան:

5. 2016 թ. ԵՊՀ կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատում: Օրակարգի 3-րդ հարցը ներկայացնելիս ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանը նշեց, որ առաջին անգամ են ԵՊՀ կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատվում այս ձևաչափով: ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներն են ֆակուլտետները, գիտահետազոտական ինստիտուտները, մասնաձյուղը, ամբիոնները, կենտրոնները, լաբորատորիաները, վարչությունները, բաժինները, հաշվապահությունը, գիտական գրադարանը, թանգարանը, արխիվը, խմբագրությունները, ինժեներատեխնիկական, օժանդակ և այլ ստորաբաժանումները: Կա-

ռուցվածքային փոփոխությունների մի շարք առաջարկներ են քննարկվել Գիտական խորհրդում, օրինակ՝ լուծարել Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի էկոլոգիական քիմիայի ամբիոնը, Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի տնտեսագիտության տեսության ամբիոնը վերանվանել տեսական և ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի, լուծարել «ԵՊՀ ավտոմատ հեռախոսակայան» կառուցվածքային ստորաբաժանումը և ԵՊՀ տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչության կազմում ստեղծել հեռախոսային ցանցի սպասարկման բաժին, լուծարել «ԵՊՀ միջազգային կրթական կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը և ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության սփյուռքի բաժինը վերակազմակերպել օտարերկրյա ուսանողների գործերի վարման բաժնի, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում ստեղծել հայերենագիտության, սփյուռքագիտական հետազոտությունների և հայ-ռուսական հարաբերությունների բաժիններ, իսկ հայոց պատմության աղբյուրների վերլուծության և գնահատման բաժինը վերակազմակերպել հայոց պետականության պատմության հիմնախնդիրների հետազոտության բաժնի:

Բոլոր ստորաբաժանումների հաստիքների ընդհանուր թիվը 2727 դրույք է, որից պրոֆեսորադասախոսական անձնակազմինը՝ 1168.25, գիտական անձնակազմինը՝ 481.5, Իջևանի մասնաճյուղինը՝ 224.75 դրույք: Տրվում են նաև տարբերակված հավելավճարներ, դասախոսական աշխատանքի վարձատրություն ժամավճարային հիմունքով, տարեկան մեկ անգամ (դեկտեմբերին) պարգևատրում հիմնական աշխատակիցներին:

2016 թ. հաստիքացուցակով նախատեսված ծախսերի չափը 6.574.000.000 (վեց միլիարդ հինգ հարյուր յոթանասուներորս միլիոն) դրամ է:

Խորհրդի անդամ, ՀՀ Սփյուռքի նախարար Հ. Հակոբյանն առաջարկեց ԵՊՀ կառուցվածքում ստեղծել «Սփյուռք» ամառային դպրոցի կազմակերպման և անցկացման աշխատանքները համակարգող բաժին: ԵՊՀ ղեկավարը հավանություն տվեց նախարարի առաջարկին և նշեց, որ բուհի հետագա ծրագրերում տվյալ հարցն ընդգրկված է:

Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանն առաջարկեց առանձին երկու քվերակություններով հաստատել ԵՊՀ կառուցվածքը և հաստիքացուցակը: Նախ քվերակության դրվեց ԵՊՀ կառուցվածքը. կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Դեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5-րդ ենթակետով և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ ենթակետով՝ հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016 թվականի կառուցվածքը՝ համաձայն հավելվածի:

Այնուհետև Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանն առաջարկեց հաստատել ԵՊՀ հաստիքացուցակը. կողմ` 29, դեմ` 0, ձեռնպահ` 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 6-րդ ենթակետով և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 6-րդ ենթակետով` հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016 թվականի հաստիքացուցակը` համաձայն հավելվածի:

6. 2016 թ. ԵՊՀ ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձի ընտրություն: ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանը ներկայացրեց, որ ԵՊՀ 2016 թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձի ընտրության նախնական մրցույթին մասնակցելու համար հայտ են ներկայացրել 3 ընկերություններ` «Սոս-աուդիտ» ՍՊԸ, «Էյ-Էն աուդիտ» ՓԲԸ, «ԹՄ աուդիտ» ՓԲԸ, որոնցից ամենացածր գինը (14 մլն դրամ) առաջարկում է «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ն: Հիմք ընդունելով ընկերությունների կողմից ներկայացված պայմանները` առաջարկվեց աուդիտ իրականացնելու համար ընտրել առավել ցածր գին ներկայացնող ընկերությանը: Այլ առաջարկներ չեղան, և Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանն առաջարկը դրեց քվեարկության. կողմ` 29, դեմ` 0, ձեռնպահ` 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 13-րդ և 39-րդ հոդվածի 3-րդ կետերով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 9-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 9-րդ ենթակետով` «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016 թվականի ֆինանսատնտեսական գործունեության և ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող անձ ընտրել «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ին և սահմանել աուդիտ իրականացնող անձի հետևյալ գործառույթները.

- 1) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016 թ. համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացում և անկախ աուդիտորական եզրակացության ներկայացում:
- 2) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի եկամուտների ու ծախսերի 2016 թ. տարեկան նախահաշվի և դրա փոփոխությունների կատարողական հաշվետվության աուդիտի իրականացում և անկախ աուդիտորական եզրակացության ներկայացում:

7. Ընթացիկ հարցեր

ա) «ԵՊՀ ուսանողական ծառայություններ» ՍՊԸ ստեղծում ԵՊՀ կազմում: ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանը Խորհրդի անդամներին զեկուցեց, որ այս ՍՊԸ-ի ստեղծման հարցը քննարկվել է Խորհրդի նախորդ նիստում և թողնվել այս նիստի հաստատմանը կանոնադրության նախագծի բացակայության պատճառով: Նա հիշեցրեց, որ նախաձեռնությունը ԵՊՀ ուսխորհրդինն է, որը ցանկանում է ՍՊԸ-ի միջոցով համալսարանական տարբերանշաններով հագուստի, գրիչների և այլ իրերի վաճառքի կազմակերպմամբ ստացված հասույթից օգնել սոցիալապես անապահով ուսանողներին: Խորհրդի անդամ, ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ Ա. Աթանեսյանը հետաքրքրվեց՝ արդյոք ՍՊԸ ստեղծումը չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի դրույթներին և չի խոչընդոտում ուսանողին էժան ծառայությունների մատուցման մրցակցության ապահովմանը: Հարցերին պատասխանեց Խորհրդի անդամ, ՀՀ Նախագահի վերահսկողության ծառայության ղեկավար Հ. Հովսեփյանը՝ նշելով, որ ՍՊԸ-ն «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պարտավորված է լինելու հավասար պայմաններով մասնակցել մրցույթներին՝ չունենալով որևէ արտոնյալ դիրք, ուստի ՍՊԸ ստեղծումը չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի դրույթներին և չի խոչընդոտում ուսանողին էժան ծառայությունների մատուցման մրցակցության ապահովմանը:

Խորհրդի անդամ, ԵՊՀ ՌԻՄ նախագահ Ռ. Քարամյանն առաջարկեց ՍՊԸ տնօրեն նշանակել ԵՊՀ ՌԻՄ նախագահի տեղակալ, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մագիստրանտ Ա. Հարությունյանին:

ՍՊԸ ստեղծման առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 43-րդ հոդվածներով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 8-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 8-րդ ենթակետով՝

1. Ստեղծել «ԵՊՀ ուսանողական ծառայություններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (այսուհետ՝ Ընկերություն):
2. Ընկերության հիմնադիր և միակ մասնակից համարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին:
3. Ընկերության մասնակցի բաժնեմասի կառավարման լիազորությունները վերապահել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորին:
4. Որպես Ընկերության կանոնադրական կապիտալ՝ ներդնել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

5. Ընկերության գտնվելու վայր համարել ՀՀ, 0025 ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 հասցեն:
6. Հաստատել Ընկերության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
7. Ընկերության պետական գրանցման և կանոնադրական կապիտալի վճարման ծախսերը կատարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի միջոցների հաշվին:
8. Ընկերության գործադիր մարմին համարել Ընկերության տնօրենին՝ այդ պաշտոնում հաստատելով Արմենակ Ֆրունզիկի Հարությունյանին:
9. Հանձնարարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորին՝ դիմելու ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը՝ Ընկերությունը և Ընկերության կանոնադրությունը գրանցելու համար:

բ) Այլ հարցեր: Ընթացիկ հարցերի քննարկման շրջանակներում ելույթ ունեցավ Խորհրդի անդամ, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի փոխնախարար Ա. Քարամյանը՝ ներկաների ուշադրությունը հրավիրելով Երևանի պետական բժշկական համալսարանի հիմնադրման 95-ամյա հոբելյանական միջոցառումների վրա, թեև ԵՊԲՀ-ն հիմնադրվել է 1930 թ.: Խորհրդի անդամ, ՀՀ ԿԳ նախարար Ա. Աշոտյանն ընդգծեց, որ ԵՊԲՀ-ն տոնել է բժշկական բարձրագույն կրթության համակարգի հիմնադրման 95-ամյակը, սակայն ՀՀ Նախագահն արդարացված համարեց համալսարանականների մտահոգությունը:

Խորհրդի անդամ, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ Ա. Մովսիսյանը ԵՊՀ մտավորականության անունից հետաքրքրվեց Արցախյան հիմնախնդրի շուրջ բանակցային գործընթացի վերջին զարգացումների մանրամասներով: Նախագահը ներկայացրեց իր դիրքորոշումը հարցի առնչությամբ՝ անդրադառնալով Բեռնում տեղի ունեցած հանդիպմանը և Մոսկվայում կայացած ՀԱՊԿ զագաթաժողովին:

Ղրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ձեռք բերված լաբորատոր սարքավորումների մաքսազերծման խնդիրների մասին բարձրաձայնեց ԵՊՀ ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր Գ. Հաջյանը: Նա ընդգծեց, որ սարքավորումների մաքսազերծման համար բավականին մեծ գումարներ են պահանջվում, ինչը նախատեսված չէ դրամաշնորհային ծրագրերով: Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը նշեց, որ դրամաշնորհային ծրագրերի ընդլայնման և լաբորատորիաների վերազինման հարցում պետությունը կհոգա դրամաշնորհների միջոցով ձեռք բերված սարքավորումների մաքսազերծման հոգսը: Խորհրդի անդամ, ՀՀ ԿԳ նախարար Ա. Աշոտյանը հավելեց, որ 2016 թ. հունվարի 27-ից ԵՊՀ աշխատակիցները և սովորողները հնարավորություն

կունենան դիմելու ԵՄ «Հորիզոն 2020» ծրագրով նախատեսված մինչև 80 մլրդ եվրո դրամաշնորհային ֆոնդի հետազոտական և նորարարական ծրագրերի, ինչը լուրջ հնարավորություն է ԵՊՀ գիտական ծրագրերի ընդլայնման և սարքավորումների թարմացման համար:

Խորհրդի անդամ, ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանող Ա. Նինոյանը բարձրաձայնեց ԵՊՀ շրջակայքում կրպակների անկանոն տեղադրման, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի կողմից բուհի հարակից տարածքներից հողահատկացումների մասին: Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը խոստացավ ուսումնասիրել և շուտափույթ լուծում տալ խնդրին:

Այնուհետև ԵՊՀ ՌԻՄ նախագահ Ռ. Քարամյանը մանրամասն ներկայացրեց հաշվետու ուստարում ՌԻՄ կատարած աշխատանքը՝ առանձնակի շեշտադրում կատարելով ուսանողական ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը Արցախում:

Խորհրդի քարտուղար Մ. Մալխասյանը հարցերից և ելույթներից հետո Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանին հանձնեց «ԵՊՀ ՌԻԳԸ գիտական հոդվածների ժողովածու»-ի 2015 թ. 7 համարները, որտեղ ընդգրկված են ԵՊՀ հիմնադրման 95-ամյա հոբելյանին նվիրված գիտական նստաշրջանի նյութերը: Նա շնորհակալություն հայտնեց 196 հոդվածների խմբագրման աշխատանքներում ընդգրկված դասախոսներին, ինչպես նաև կազմակերպչական թիմին և բուհի ղեկավարությանը՝ պարբերականի հրատարակման գործում ցուցաբերած աջակցության համար:

Այլ հարցեր և ելույթներ չինչեցին: Նախագահ Ս. Սարգսյանը ամփոփեց Խորհրդի աշխատանքները և նիստը հայտարարեց փակված:

Խորհրդի նախագահ՝

Ս. Սարգսյան

Քարտուղար՝

Մ. Մալխասյան